# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ. հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում գործնական աշխատանքի դերը որպես քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման միջոց |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Հարությունյան Մելինե Արտավազդի<br><br>Դասվար<br><br>077013028<br>Melin.271084@gmail.com<br>Մաթեմատիկա, Մայրենի, Ես և շրջակա աշխարհ, Տեխնոլոգիա<br><br>I – IV դասարաններ |

| | |
|---|---|
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | «Առողջ ապագայի տեսլական» հիմնադրամ<br>Էվրիկա դպրոց, Ադոնցի փող. 6/2 շենք<br>099950440<br>Eureka.my.school@gmail.com |

# Բովանդակություն


- Տիտղոսաթերթ ---------- 1
- Բովանդակություն ---------- 2
- Ներածություն ---------- 3
- Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը ---------- 4
- Գրականության ակնարկ ---------- 6
- Հետազոտության ընթացք ---------- 10
- Եզրակացություններ, առաջարկություններ ---------- 14
- Օգտագործված գրականության ցանկ ---------- 17
- Հավելվածներ ---------- 18

# Ներածություն

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | Մանկավարժների մեթոդական, մասնագիտական պատրաստվածությամբ, գործնական աշխատանքների ճիշտ կազմակերմամբ և հմտությունների որակով է պայմանավորված աճող սերնդի կրթվածությունը և արժեհամակարգի ձևավորումը:Ուսուցման և ուսումնառության ընթացքի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցիչի մասնագիտական կարողությունների հմուտ կիրառումից և կոմպետենտության աստիճանից. գործընթացի ճշգրիտ պլանավորումը, գործնական աշխատանքների կազմակերպումը, գիտելիքի փոխանցման, դրա ինքնուրույն ձեռքբերման ուղիների մատնանշումը, սովորողներին սովորել սովորեցնելու կարողությունը փաստում են մանկավարժական համակարգված գործունեության մասին: Ուստի դասավանդողից պահանջվում է շարունակական ինքնակրթություն, մասնագիտական կարողությունների վերանայում և վերամշակում՝ արդի պահանջներին համապատասխան:<br>Ուսուցման ժամանակակից տեսությունների հիմնական առանձնահատկություններից է դասավանդման գործընթացում գործնական աշխատանքների կազմակերպման մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը: Այս հարցի քննարկումը հանգեցրել է կրթության բովանդակության, մեթոդների և ձևերի, ուսուցման արդյունավետության գնահատման |

| | |
|---|---|
| | սկզբունքների վերանայման անհրաժեշ_ տությանը, որն էլ ապահովում է մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը և անհրաժեծտությունը: Աշխատանքի նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել արդյո՞ք գործնական աշխատանքների կազմակերպումը նպաստում է երեխաների քննադատական և ստեղծագործական մտածողության վրա ես և շրջակա աշխարհն առարկայի շրջանակներում: Աշխատանքի նպատակից ելնելով անհրաժեշտ է ներկայացնել<br>• գործնական աշխատանքի կարևորությունը դասավանդման ընթացում<br>• ուսումնասիրել գործնական աշխատանքի կազմակերպման միջոցները «Ես և շրջակա աշխարհը» դասերին<br>• Ներկակացնել դասի պլան «Ես և շրջակա աշխարհը»-ի դասերից |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողուն ակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետեւյալ կոմպետենցիաներին.<br>• լեզվական գրագիտություն եւ կարողունակություն,<br>• սովորել սովորելու կարողունակություն,<br>• ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>• ճանաչողական կարողունակություն |

| | |
|---|---|
| | |
| **Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | ք. Երևան<br>Էվրիկա դպրոց<br>2-րդ դասարան<br>16 աշակերտ՝ 9 աղջիկ և 7 տղա |
| | |
| **Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)** | Աշխատանքը կատարել ենք հետևյալ մեթոդներով.<br>• Ուսումնասիրություն,<br>• Վերլուծություն,<br>• Համեմատում:<br>Հետազոտության ընթացքում պատրաստել ենք պաստառներ, ստվարաթղթի վրա գծել ենք իրենց բնակավայրի, թաղամասի քարտեզը: |
| | |
| **Հետազոտության իրականացման ժամանակահատվածը** | Մեկ<br>ամիս |
| | |

| Գրականության ակնարկ | Գործնական աշխատանքի կարևորությունը դասավանդման գործընթացում |
|---|---|
| • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: | Քանի որ ճանաչողության հիմքը պրակ-տիկան է,հետևաբար աշակերտների գիտակ-ցությունը պետք է տանել նրան, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրները լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Այդ խնդիրների գիտական լուծումները փոր-ձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:<br>Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունա-կությունների զարգացումն ապահովելու հա-մար գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է:<br>Գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:Նշված բոլոր աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխա-տանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ |

վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով:Գործնական աշխատանքը որպես կանոն առաջադրվում է դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի հետևողականությունը պարտադիր է:

Աշակերտը գործնական աշխատանքի մա-սին տեղեկացվելիս պետք է հստակ պատ-կերացում ունենան, թե ինչ է պահանջվում իրենցից: Սա աշխատանքի կազմակերպման նախապատրաստական փուլն է: Այդ փու-լում աշակերտները պետք է պարբերաբար խորհրդակցեն ուսուցչի հետ, կլինեն աշա-կերտներ,որ կունենան ուղղարդման կարիք: Այդպես վարվելով՝ ուսուցիչն օգնում է իր սաներին՝ սովորել սովորել, իմացածը հա-մակարգել և կիրառել այն կոնկրետ առաջա-դրանքներ կատարելիս: Չէ որ հենց սա է գործնական աշխատանքի հիմնական նպատակը:

**Քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման կարևո-ությունն ու առանձնահակությունները դասապրոցեսի ընթացքում գործնական աշխատանքի միջոցով**

Երեխաների մոտ քննադատական մտածողության զարգացումը բնածին շնորհ չէ: Քննադատական մտածելու կարողությունը ձեռք է բերվում հատուկ գործիքների, տեխնի-կայի, խաղերի, կանոնավոր վարժությունների, գործնական աշխատանքների միջոցով:

Քննադատական մտածողության զարգացման համար գործնական աշխատանքներն այսօր նոր

նշանակություն են ձեռք բերում, քանի որ համակարգիչների և խաղային այլ սարքավորումների լայն տարածումը զբաղեցնում է մատաղ սերնդի առօրեայի մի զգալի մասը: Ուստի մեծանում է երեխաների մտավոր գործունեության մարզմանը նպատակա-ուղղելու հրամայականը: Դասապրոցեսի ընթացքում ևս նպատակամղված գործնական աշխատանքները պետք է խթանեն երեխայի ռազմավարական մտածողության ձևավո-րմանը, տրամաբանության զարգացմանը:

Քննադատական /տրամաբանական մտածել նշանակում է առանձնացնել էականը երկրորդականից, գտնել փաստարկներ, հակադարձումներ և եզրակացություններ անել, որին շատ նպաստում է սեփական փորձը, հետազոտությունը: Դա ավելի շուտ համոզիչ լինելու և դյուրահավատ չլինելու և սեփական մտածողություն ունենալու կարողությունն է: Քննադատական մտածողության զարգացմամբ զբաղվելը պետք է սկսել գործնականում օրորոցից:

Քննադատական մտածողությունը հասկացվում է որպես երեխաների հետաքրքրասիրության դրսևորում, որոշակի հարցի վերաբերյալ սեփական տեսակետի ձևավորում, այն տրամաբանական փաստարկներով պաշտպանելու կարողություն, հետազոտական մեթոդների կիրառում:

**Ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասապրոցեսում**

Համաձայն նոր չափորոշիչերի, առարկան նպատակ ունի հիմքեր դնել և սովորողին օգնել՝

| | |
|---|---|
| | ✓ Հասկանալ սեփական ինքնությունը՝ որպես անձ և անհատականություն,<br>✓ Ընդունել մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, ընդունել իր հասակա-կաիցներին՝ հարգելով նրանց առանձնահատկությունները, դրսևորել միմյանց նկատմամբ հարգալից և ոչ խտրական վարքագիծ,<br>✓ Արդյունավետ հաղորդակցվել, հասկա-նալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ,արտահայտել սեփականը,<br>✓ Պատկերացում ունենալ ազգային, համամարդկային և համերկրային գաղափարներից, ընդունել այն,<br>✓ Ուսումնասիրել աշխարհը Հայաստանի տեսանկյուից,<br>✓ Ձեռք բերել փորձառություններ, որ հիմնված են իրենց հետաքրքրու-թյունների վրա և խթանում են իրենց շրջակա աշխարհն ուսումնասիրելու ձգտումը,<br>✓ Կիրառել քննադատական և ռեֆլեկտիվ մտածողություն տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու, որոշում-ներ կայացնելու հարցում,<br>✓ Զարգացնել բնագիտական հետազո-տությունների համար անհրաժեշտ գաղափարներ հմտություններ և սովորություններ,<br>✓ Գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն, հաշվի առնել տարբեր տեսակետներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց, |

| | |
|---|---|
| | ✓ Տեղեկացված լինել որոշումների կայացման բարոյաէթիկական հետևանք-ների մասին,<br>✓ Ունենալ պատասխանատու և գիտակից վերաբերմունք սեփական և ուրիշների առողջությանն ու անվտանգությանը, ձեռք բերել համապատասխան սովորություններ,<br>✓ Հասկանալ հասարակական որոշ գործընթացների կարևորությունը, գիտակցել սեփական արձագանքի հնարավոր ազդեցությունը հասարակության վրա:<br>Առարկայի դասավանդման նպատակների հպանցիկ ուսումնասիրությունն արդեն իսկ փաստում է, որ առարկայի դասավանդման պրոցեսում գերխնդիր է մտածող, վերլուծող ու տրամաբանող անհատի կերտումը: |
| | |
| **Հետազոտության ընթացքը** | Իսկ ինչպես կարելի է գործնական աշխատանքի միջոցով զարգացնել քննադատական մտածողությունը հենց դասապրոցեսում: Փորձեմ ներկայացնել օրի-նակով: Երկրորդ դասարանի դասագրքային նյութը մեկ ամբողջ թեմա նվիրում է բնա-կավայրին՝ քաղաքի ու թաղամասի կտրվածքով:Նախնական փուլում երեխաներին տվել էի հատորոշիչ թեստ,որի միջոցով պետք է հասկանայի աշակերտների ունեցած գիտելիքներն իրենց բնակավայրի, թաղամասի վերաբերյալ: Աշակերներին նաև հանձնարարել էի ստվարաթղթի վրա նկարեն իրենց բնակավայրի, |

թաղամասի քարտեզը: Այդ աշխատանքներն ինձ անհրաժեշտ էին վերջնարդյունքի հետ համեմատելու համար:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում արկղիկի մեջ լցրել էի տարբեր շինարարական, բժշկական, վարսավիրական գործիքներ, երեխաները հերթով արկղիկից հանում էին գործիքը և փորձում էին կռահել, թե ինչի մասին ենք խոսելու այդ օրը:Հնչած բոլոր բառերը, կարծիքները գրել էինք գատախտակին, ապա հուշող բառերով փորձել ամբողջացնել միտքը: Այս հուշումները նպաստում էին, որ սովորողները մաքսիմալ լարեն իրենց հիշողությունը, փորձեն հասկանալ՝ ինչ ընդհանրություններ ունեն նշված առարկաները: Բացի այդ, այսպիսի գործնական աշխատանքը,որն իրականացրեցինք մտագրոհի միջոցով հնարավորություն տվեց նաև գտնելու առարկաների պատճառ-հետևանքային կապերը, որոնել նմանություններ առարկաների ու դրանց հետ կապված երևույթների հետ: Գիտելիքների ամրապնդման համար աշակերտներին հանձնարարել էի հաջորդ դասի համար հավաքեն տեղեկություններ իրենց բնակության վայրի մասին, թե ինչ հանրային սպասարկման կետեր կան, ինչ հուշարձաններ կամ աչքի ընկնող շինություններ:

Այդ հանձնարարությունից հետո պլանավորել էի հետաքրքիր վերլուծական աշխատանքի մեկ այլ տարբերակ՝ «Լուրերի պաստառը»,որը երեխաները պետք է իրականացնեին լուրերի թողարկման տեսքով: Լուրերի պաստառի տեխնիկան տարրական դասարաններում կարելի

| | |
|---|---|
| | է կիրառել հիմնականում տնային աշխատանքների ժամանակ:<br>Աշակերտները մեծ ոգևորությամբ սպասում էին հաջորդ դասին, ամեն օր մի նոր տեղեկություն էին բերում իրենց բնակավայրից, թաղամասից: Հատկապես այն երեխաները,ովքեր իրար մոտ էին բնակվում կամ նույն թաղամասից էին: Դիտարկման ընթացքում հայտնաբերեցի, որ մեկը մյուսից շատ բան է սովորում,նրանք այդ ընթացքում ոչ միայն շինությունների,արձանների մասին էին խոսում, այլ նաև հավելյալ տեղեկություններ էին փոխանցում մեկը մյուսին: Տեսածն ու լսածը՝ վերլուծում, քննարկում, համեմատում:<br>Արդեն հաջորդ դասին բավականին տեղեկություններ ունեին, ներկայացրեցին իրենց թաղամասը, բնակավայրը:<br>3-րդ դասի համար հանձնարարել էի խմբային առաջադրանք: Աշակերտներին բաժանել էի 2 խմբի: 1-ին խմբի աշակերտներին հանձնարարել էի պատրաստել «Լրատվական պաստառ» և լրատվական թողարկման ձևով ներկայացնել իրենց համայնքում հանգստյան օրերին հանդիպած որևէ իրադարձություն, դեպք, որն, ըստ իրենց համայնքի բնակիչների համար օրինակելի է, կնպաստի համայնքի զարգացմանը: 2-րդ խումբը՝ թե ինչ է պակասում իրենց համայնքում, որն ավելի լավը կդարձներ, այն պարսավելի է և պետք է ներկայացնել այն այնպիսի շեշտադրմամբ, որ վատ փորձը երբևէ կրկնօրինակման առիթ չհանդիսանա, բոլորը խուսափեն արարքը կրկնելուց: |

Լուրերի թողարկման համար պատրաստել էի հեռուստացույցի շրջանակ:
Աշակերտներն աշխատանքը շատ սիրով ու հետաքրքրությամբ էին կատարել: Նրանք նույնիսկ այդ օրը ավելի ներկայանալի տեսք ունեին, քանի որ լուրերի թողարկում էին վարելու: Շաբաթվա ընթացքում հետևել էին, թե ինչպես պետք է վարել լուրերը, ինչպես գեղեցիկ խոսք կառուցել և մեծ ոգեևորվածությամբ լրատվական թողարկումը վարեցին իրենց դասընկերների առջև:

Դիտարկման փուլի ավարտին աշակերտներին հանձնարարել էի կրկին նկարել իրենց բնակավայրի, թաղամասի քարտեզը: Աշակերտներին բաժանեցի նաև հայտորոշիչ թեստերը, իրենք համեմատեցին, զտան բավականին տարբերություններ առաջին և վերջին աշխատանքների միջև, երեխա կար նույնիսկ բարձրաձայնեց. «կարծես ուրիշ թաղամաս նկարած լինեմ» :
Այնուհետև քարտեզները իրար կողք ամրացրեցինք պատին, երեխաները մի քանի օր շարունակ մոտենում էին բոլորի աշխատանքները նայում էին, վերլուծում էին, քննարկում էին:

Կարծում եմ դասի կառուցման այս տեխնիկան ու օրինակը մաքսիմալ կերպով մղում են սովորողներին մտածելու, կենսական են ու հնարավորություն են տալիս դուրս գալ դասագրքային իրականությունից ու գիտելիքը պրոյեկտել իրական կյանք:

| | |
|---|---|
| | |

# Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Վերլուծելով երեխաների սկզբանական աշխատանքները, որի կատարողակա-նությունը կազմում էր դասարանի 25-30 տոկոսը, վերջնական աշխատանքների հետ, որի ժամանակ գրանցեցինք մոտավոր 80-90 տոկոս կատարողականություն, միանշանակ կարող ենք,այո գործնական աշխատանքը նպաստում է երեխայի քննադատական և ստեղծագործական մտածողության վրա «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում:<br>Վերոնշյալ թեման ուսումնասիրելիս եկա այն եզրահանգման, որ գործնական աշխատանքներ կիրառվում են «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ձևավորում այնպիսի կարողություններ և հմտություններ,որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում: Մասնավորապես՝ սովորողները՝ զարգացնում են իրենց աշխարհաճանաչողական գիտելիքները, ձեռք են բերում սոցիալական հմտություններ, իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը, ինքնադրսևորվում են:<br><br>Առաջարկում եմ « Ես և շրջակա աշխարհը» առարկայի յուրաքանչյուր դաս լինի |

| | |
|---|---|
| | հետազոտություն, փոքրիկ ուսումնասիրու-թյուն: Կարծում եմ, որ ոչ մի դաս չի կարող զուտ տեսական նշանակություն ունենալ: Յուրաքանչյուր դաս պետք է լինի մաքսիմալ փորձարարական/գործնական ու տեսանելի, հնարավորինս հետաքրքիր: Դասապրոցեսի առավելագույն հետաքրքրությունը կարելի է ապահովել միայն մասնակցային ու աշակերտակենտրոն դասպրոցեսում, որտեղ ուսուցիչը տալիս է հուշումներ, բանալիներ, ուղղորդում է, իսկ բուն աշխատանքը, գիտելիքի «հայտնագործումն» իրականացնում են երեխաները: Այսպիսի դասի առավե-լությունների թվում պետք է առանձնացնել մասնակցայնությունն ու գիտելիքի շոշա-փելիությունը, տեսանելիությունը, երբ աշակերտը հնարավորություն ունի ոչ միայն կարդալ արդեն եղածը, փորձել այն վերարտադրել, այլ նաև սեփական փորձով համոզվել, ինչու չէ նաև սեփական փորձը ավելացնել եղածին:<br>Սովորողների պասիվ ներկայություն պահանջող, որևէ նպատակով կարևոր համարվող, արդեն արձանագրված փաստերի, ապրած կյանքերի ու իրադարձությունների, գոյություն ունեցող հարաբերությունների ուսուցումը ներկայումս արդիական չէ: Աշակերտական համայնքն այսօր կարիք ունի ակտիվ մտածողության զարգացման, սեփական փորձով գիետելիքի կառուցման , ինչպես նաև սովորողների մոտ խոր հմտություններ ձևավորել: |

| | |
|---|---|
| | |
| **Այլ տեղեկատվություն** | |

# Օգտագործված գրականության ցանկ


1. Ամիրջանյան Յ., Մանկավարժություն, Երևան, 2005
2. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <>, 2004.
3. ՀՀ Տավուշի մարզում փորձարկվող <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի չափորոշիչներ,https://escs.am/files/files/2021-05-06/2f673a3c45c1e1dac473af0a1c31f648.pdf, հասանելի է:
4. Владимировна Н. И., Развитие критического мышления учащихся начальных классов, https://nsportal.ru/nachalnaya-shkola/raznoe/2012/02/23/razvitie-kriticheskogo-myshleniya-uchashchikhsya-nachalnykh, հասանելի է:
5. Ведмеш Н.А., Развитие мышления, https://psihomed.com/razvitie-myishleniya/, հասանելի է:
6. . Միջազգային բակալավրիատ կրթական ծրագրի ինտերնետային կայք էջ, https://ibo.org/, հասանելի է:

# Հավելվածներ

**Հաշվետվության կցված նյութեր**

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Սկզբնական աշխատանքներ





Վերջնական աշխատանքներ